

ՄԱՍԻՍ

Շ Ա Ք Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

50րդ ՏԱՐԻ Ի 20

(ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ)

19 ՄԱՅԻՍ 1901

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱԳՐԱԿԱՆ ԲԱՐԵԿՐԹՈՒԹԻՒՆԸ	ԲԱՐԳԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ
«ՆՈՐԱՎԻՊԱԿ»	Ե. ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ
ՍԻՐՈՒԱԾ ԳԷՄՔԵՐ. Գրիգոր Զօհրապ	Օ. ՉԻՖԹԷ-ՍՍՐԱՖ
ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ	ԹՂԿԱՏԻՆՑԻՆ
«ՆՈՐԱՎԷՊ»ԻՆ ՇՈՒՐՋԸ	ՅՈՎՀ. ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԿԷՍ-ԲԺՇԿԱԿԱՆ	ՏՈՔԹ. Յ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆ
ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԷՆ	Տ. Ա.
ՅՈՒՇԱՏԵՏՐ	

ՀԱՍՑԷ


دو علیہ غلطہ « ماسیس » غزنی سی ادارہ سی

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»Ի

Կ. Պոլիս, Ղազարիս, Նորասուևկեան իսան

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է, Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր Ի

Ջեմփս, ոսփի եւ ձեռքի ու ոսփի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ զիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՇԱՐԼՈՒԿԱՆ
ՄԱՍՆԱՎՆԱՐՈՒՄՆԵՐ

Բեթա, Մեծ Բողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դիմաց.

- | | | |
|--------|---|---|
| ԿԱԼԱԹԱ | } | 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Գարաբէոյ, Թրամվէյին կայարանին Դիմաց. |
| ՊՈԼԻՍ | } | 1. Սուլթան Համամ. |
| | | 2. Սուլթան Պէյազիւս. |

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կասարեալ երաւիսաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ



ՌՕՍԻԱ — ROSSIA




Ս. Պ. Ս. Ն. Վ. Ա. Գ. Ր. Ա. Կ. Ա. Ն. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիւններ	34,775,642 ֆրանք
Երաշխաւորութեան գումար	121,765,333 »
1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած	164,172,000 »

Կեդրոնացեղի, Ղալաթիոյ քաղաքին վրայ, Մախասան հին սեղր
Ընդհ. Գնեիչ
Ա. ՀԻՒՐՄԻԻՉ
Ընդհ. Գործակալ
ԹԷՌՏՈՐ ՌԷԲԲԷՆ

ՄԱՍԻՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱԳՐԱԿԱՆ ԲԱՐԵԿՐԹՈՒԹԻՒՆԸ



Բարեկրթութիւնը՝ իբր անսխալական ու անհրաժեշտ պայման մարդկային բոլոր արտասոյստութիւններուն մէջ կեղծիք մը չէ՝ «Բարեկրթութիւն» բնութեամբ ինչ որ կը պահանջուի մարդոց խօսուածքին, շարժումներուն, յարաբերութիւններուն ու վերաբերութիւններուն մէջ, կը պահանջուի նաեւ հրապարակագրութեան մէջ եւ այս պահանջը, եթէ կուզէք պայտնանք՝ ամենէն կենսականն է:

Հրապարակագրութիւնը մեր մտաւորական, անտեսագիտական, բարոյական, մէկ խօսքով մեր կեանքէն բոլոր բոլոր գործողութիւններուն կամ մեր կեանքը կազմող բոլոր իրողութիւններուն արձանագրութիւնն է: Ես այդպէս կ'ըմբռնեմ գրիչ շարժելու արտեստը: Հետեւաբար՝ երբ երկու անհատներ իրենց փոխադարձ յարաբերութիւններուն մէջ կը փնտռեն եւ մանաւանդ շատ բնութագրի կ'ըլլան որ բարեկրթութեան դէմ չմեղանչուի, անշուշտ շատ դիւրութեամբ կը հասկցուի թէ երկուքէ աւելի անհատներու, այսինքն՝ ամբողջ համայնքի մը անհատներու յարաբերութիւններուն մէջ ո՛րչափ ծանրակշիւ կրնան ըլլալ բարեկրթութեան դէմ եղած մեղանչումներ:

Հրապարակագրութիւնը քանի որ համայնքի մը կեանքն է ու այդ համայնքին կուղղուի, պէտք է որ ա՛յդ կեանքը հրապարակագրուած ատեն՝ բարեկրթութեան բոլոր պայմանները յարգուին եւ շատ խստապահանջ չըլլալու համար ըսենք, գոնէ յարգելու համար անկեղծ ճիշդ մը, բարի միտում

մը պէտք է զգացուի հրապարակագրութեան կնիքը համարուող գրուածներու մէջ:

Կարծուածին չափ դիւրին գործ մը չէ՝ հրապարակագրութեամբ շօշափել, խօսիլ, դատել ա՛յնպիսի խնդիրներ, որ ուղղակի անհատներու եւ հաստատութիւններու կը նային:

Իրաւ որ մեր Թերթերն ու Հանդէսները, իբր հայ հրապարակագրութեան մասնաւոր արտագրութիւններ, կ'ըսուի թէ իրենց բուն դերը չեն կատարեր, կամ թէ՛ պէտք եղած ազդեցութիւնը չեն ընէր հրապարակի վրայ:

Այս անտեսութիւնը եթէ ո՛չ բացարձակապէս, գոնէ բոլորովին ճիշտ չէ՝: Որովհետեւ լաւ Թերթեր ու Հանդէսներ միշտ կը փնտռուին, ու եթէ կը փնտռուին, յայտնի է որ ատենք դեր մը կը կատարեն յաջողութեան ո՛ր եւ է ատիճանին վրայ: Իրաւ է նաեւ որ շատ մը գրուածներ, ո՛րչափ ալ կարեւոր ըլլան, օրական կամ վաղանցիկ ազդեցութիւն մը կ'ընեն, սոսր հակառակ, ամենէն չոր եւ սակայն ստոյգ դիտողութիւն մը, զոր օրինակ Ազգային Լուսերու կամ Բրտնիկներու ձեւին տակ իսկ, ամենէն մեծ ազատութիւնը կ'ընէ: Ատենք ա՛յնպիսի իրողութիւններ են զորս պէտք չենք տեսնել օրինակներով հաստատելու:

Իրաց այս վիճակին մէջ կրնայ հարցուիլ ուրեմն թէ ի՞նչու այդ սխալ գաղափարը ունին նոյն իսկ հրապարակագրութեան մէջ Թերթ կամ հանդէս վարողներ:

Մեզի համար շատ յստակ է պատճառը. —

հայ հրապարակագրութեան մէջ պէտք եղած տեղն ու կարեւորութիւնը չը տրուիր բարեկերթութեան :

Սրալ լուրեր , տեղեկութիւններ , կը վըրտան մեր հրապարակային գրութեան մէջ : Բուն խնդիրները մտնալ եւ անձնականութիւններու դաշխլ :

Չգրուելիք բաները գրել . այսինքն՝ փառականատութիւնը , կենցաղագիրութիւնը չյարգել :

Թեթեւոյիկ գրութեաները , գրչի եւ մտքի ձարտուքները իր երգիծանք նուիրագործել :

Լուրջ ընթերցողը կրնայ շարունակել քունովն մասանցը :

Այս բոլորը մեղանչումներ չեն բարեկերթութեան դէմ : Ի՛նչ որ ներելի չէ՝ երկու անհատներու մէջ , ներելի՞ է հրապարակի վրայ , շատ մը անհատներու մէջ :

Այս դժբաղդութիւններուն վրայ կրնանք աւելցնել վիճարանութեանց լեզուն ալ մեր թերթերուն մէջ մասնաւորաբար : Ատենի մը ի վեր հայ թերթեր կարծես կը պժգան իրարմէ , այնպէս որ երբ իրարմէ կոչում ընելու դժոխային հարկին մէջ կը գտնուին . չեն ուզեր թերթերուն անունը տալ ուղղակի : Տեղական քերթ , պոչական քերթ⁽¹⁾ եւ չգիտեմ որ եւ ինչ անբարեկերթութիւններ , որոնք ազ-

(1) Լոյսը «Փրանտիստն» խորագրով յօդուածի մը մէջ այս կէտը մասնաւորապէս շեշտած է : Բոլորովին համամասիա ենք այդ ստոյգ եւ իրաւացի դիտողութիւնն , ուն :

րած են նոյն խակ գաւառացի թղթակիցներու վրայ , այնպէս որ այդ թղթակիցները սիրով սրգեգրած են հրապարակագրութեան այդ խառնածին ձեւերը , կը գգուեն վանտնք ու կը մշակեն ի հարկին : Պոլիս մշակեց . գաւառները իւրացուցին ազեղ ստացուածք մը :

Հրապարակագրութիւն մը որ իր արտայայտութեան պայմաններուն մէջ կը տկարանայ , ի՛նչ ուժաւորութեամբ կ'ուզէք որ բեղնատորի իր բուն նպատակին մէջ :

Ուղղութիւնը , ուղղամտութիւնը , ճշդագահութիւնը , աշխատութիւնը , որոնք կը կազմեն հրապարակագրական բարեկերթութեան հիմը , պէտք է ուժովցնեն , սիրցնեն մեր բոլոր թերթերուն ու Հանդէսներուն սիւնակները : Ո՛րչափ կ'իմանեմ՝ գրամ շահելու , հացը հանելու անսանական աշխատութիւն մը չէ՝ հրապարակագրութիւնը :

Սովորական աշխատութիւններէն շատ բարձր սկզբունք մը եւ շատ վսեմ նպատակ մը ունի գրչի հրապարակային աշխատութիւնը , մասնաւոր իր ամենօրեայ կամ պարբերական արտադրութիւններուն մէջ : Եւ եթէ այդ սկզբունքէն ու այդ նպատակէն չբխի՞ հրապարակագրելու աշխատութիւնը ինքնին մեղանչած կըլլայ բարեկերթութեան դէմ : Եւ ո՞ր անհատը սխալ յօժարէր խոստովանիլ թէ ինքը բարեկիրթ չէ՝ . աւելի դժուար չէ՞ շտակ պատասխան մը սպասել ո՞ր եւ է թերթէ կամ հանդէսէ , որ միշտ անհատներէ կ'անէ իր նիւթը եւ անհատներուն կ'անդրադարձնէ :

ԲԱՐԳԷՆ ՎԱՐԳԱՊԵՏ

Մ. Խ. — Տ. Բարգէն Վարգապետի այս տեսութիւնը , որ կը պատկանի Պոլսոյ Հայ մամուլին ընդհանրապէս եւ ոչ թէ այս կամ այն թերթին մասնաւորապէս , ինչպէս յայտարարեց մեզ բերանացի կերպով ալ , շատ կարեւոր պարագայ մը կը յանձնարարէ մեր ամենուս ոչադրութեան : Իր գիտողութիւնները ճիշդ են : Չժբաղդարար , բայց ոչ անգրամանելի՞ : Եւ անկեղծ փափագ մը ու բարի արամադրութիւն մը՝ լրագրագիտներուն կողմէ՝ կը բաւեն որ գրագէտ Արմաշականին մտանանիչ բրած թերթութիւնները անհետ ըլլան տակաւ տակաւ . ու այս առթիւ անգամ մըն ալ յիշենք թէ հրապարակագրութիւնը «գրամ շահելու , հացը հանելու անսանական աշխատութիւն մը չէ» որուն մէջ մրցումը նիւթական հաշիւներու վրայ միայն հիմնուի :

Անկողմնակալութեամբ բացինք մեր էջերը Տ. Բարգէն վարգապետի քննադատականին առջեւ , որ պզտիկ գոս մը կուտայ գրչի աշխատարաններուս , դոս մը սրմէ իրաքանջիւրս կրնանք օգտուիլ այն համեմատութեամբ որով մեղանչած ենք կամ կը մեղանչենք հրապարակագրական բարեկերթութեան կանոններուն դէմ :

ՍԻՐՈՒԱԾ ԴԵՄՔԵՐ

ԳՐԻԳՈՐ ԶՕՂՐԱՊ

(ԼՈՒՍԱՆԿԱՐ)

Զօհրապին պատկերը վայրկենականներով
լլալիք բան չէ : Ոչ ալ ինծի պէս amateur
քստաքի մը գործը : Այլապէս գծուարին բան
մըն է ան :

Բայց փորձենք :

Հակառակ իր մազերուն ու նուրբ պեխե-
րուն մէջ սպորտած հեազհեաէ ստուար ճեր-
մակ թելերուն , տղա զէմք մը կը որ մըր ,
քնքուշ . « թօփուզի պէս » — մեր մամերուն շատ
նկարուն բարբառով — որ յաւէտ երիտասարդի
հրապարը ու խաբկանքը կը ցողացնէ միեւնոյն
ատեն : Խորանկ կարուած մազերով նոյնքան
rond գլուխ մը ու մանկական նիհար ձայն
մը , ընդհանուր ներդաշնակութիւնը խանդա-
րած պիտի ըլլային , եթէ rond գլուխ մը ու
նիհար ձայն մը չըլլային :

Ամուսնացած , գաւակներու ալ տէր , եւ
այսօր վաղը թերեւս չկրնանք գանազանել իր
աննեղ տղա գլուխը իր իրացնէ աննեղ ար-
զան , — Վահանին , — նոյնքան rond գլու-
խէն , որ կը մազթեմ եւ կարծեմ ալ թէ իր
հօրը գլուխէն ոչ նուազ լեցուն պիտի լլայ :

Բայց հակառակ իր ճերմակ մաղի թելե-
րուն՝ Զօհրապը սրտով ալ տղայ պիտի մնայ
միշտ իր զէմքին պէս , — հակառակ այդ սիրար
չարաչար գործածած ըլլալուն , — որպէս մշա-
քով մեծ մըն էր արդէն իսկ , իր տղայ տա-
րիքին մէջ :

Իր նայուածքը , օ՛հ , իր նայուածքը . ան
միտինակ կը բաւէ իր ամբողջութիւնը , իր
թողած տպաւորութիւնը ու իր աննեղուկ գր-
սերեւոյթը հակասելու , թէ եւ ամենէն շիտակ
զուրկողը ըլլայ ան , իր ներքին էութեանը ու
բովանդակ . . . խոտրին վրայ : Գամի պէս
սուր , կարծր , հատու բան մըն է ան , որ
միտած տեղը կը մնայ , կը ծակէ , կը հեր-
ձուտէ :

Նայուածք մը՝ ուր ասերեւոյթ հանդար-

տութեան մը ու թեթեւ պղպղակուով մը տակ ,
ամէն բան կայ , խտացած ու ալեկոծ : Իր
մէկ ակնարկովը կը շարձագատէ , կը մերկացնէ ,
կը բովանդակէ քեզի : Քու դատաստանդ կայ
անոր մէջ , սխալ կարծիքներու դատապար-
տութիւնը , « անոնց բարոյական » ին արհամար-
հանքը՝ որուն վրայ ինք՝ Քոիզանթէմէն շատ
առաջ նստած է : Աշխարհի լիովին ըմբռնողու-
թեան ապացոյցը , մեղքին անխիպ ու անմեթ
գիտակցութիւնը ու հեշտանքին վրդովկոտ
թովանքը կորտացողայ այդ ջինջ աչքերուն
մէջէն : Կեանքի անխուով ու անփայթ փիլիսո-
փայութիւնը ունի ան : Ճանչցած է անոր ու-
նայն անյատակութիւնը եւ թերեւս անոր
համար է որ այնքան միջամուխ եղած է
անոր , — կեանքին ալքերուն մէջ :

Զօհրապին հօղի վրայ քալելը բնաւ չեմ
գիտեր ես ինտոր բան է : Այնքա՛ն անգամ
ներ տեսած եմ զայն եւ սակայն միշտ սոքքը
կարած գետնէն : Ամէն անգամ որ կառքի մը
մէջ հեռուէն տեսնեմ գլուխ մը միայն ու կօ-
շիկներ , անձկանքով ու արագաքայլ կը հե-
տեւիմ անոր , ապահով ըլլալով հոն տեսնել
Փոքրաիկիլին գրողը . . . այնքա՛ն հորիզո-
նական է ան միշտ . . . իր դիրքին մէջ : Ան-
կուշտ տենչանք մը , մոլանք մը թերեւս ու-
նիմ , որպէս շատեր ինծի պէս նորհաս , զայն
տեսնելու ու գիտելու , վայելելու համար լսիկ
ու լիւ , ինչու որ վայելք մըն է տարօրինակը
դիտելը . եւ ինք՝ իր պարզ երեւոյթի մտակ ,
մեր գերազանց excentriqueներէն մէկն է :

Ուրիշի մը կանոնապաշտութիւնը բացատ-
րելու ատթիւ նրքա՛ն լաւ ինքնասահմանած է
ըսելով . « Ես որ համակ բացատրութիւն եմ : »
Ամբողջ Զօհրապը այդ երկու բառին մէջ կա-
տարեւապէս կը գտնեմ ես : Իր բոլոր ըրածը ,
թողածը , գրածը , խօսածը ուղիղ դժէ , որոշ
կարգէ , կապէ դուրս է բաւարովին եւ այդ՝ իր

զլուսար յատկանիչը ըլլալով հանդերձ, իր արժանիքն ալ կըլլայ ու կը մնայ :

Եղիան է որ, — ան ալ բացառութիւն մը համակ, թէեւ քիչ մը աւելի արուեստատա ու նուազ ինքնաբերական, — ըսած է հեղ մը. «Ուղիղ գծի աղբորութենէն վեր, կոր գծի աղբորութիւնը կայ .» եւ ես Չօհրապին ծուռ գիծը, ուրիշներուն ուղիղ գծէն շատ վեր կը դաւանիմ : Իր վրդկատ հոգիին վրայ բուսած մեղքերը, շատ մը դողրած էութիւններու մէջ նիրհող սրբութիւններէն աւելի ձգտողութիւն ու հրապոյր ունին :

Իր գրականութիւնն ալ երկու բառի մէջ կարելի է ամփոփել իր էութեանը պէս : Խիզախ ու սաստիկ : Սաստիկ լախտի կամ ապարի իջնող հարուածի մը պէս որուն՝ կարգ մը ծանր ձեռքերու պէս, էն թեթեւ դպրութիւն սկիթուք մը կընէ, վերք մը կը բանայ, ցաւ մը կուտայ, հեռք մը կը թողու : Երբ գրիչը ձեռք առնէ, ա՛լ ետին առջին չիմայիր : Աջ ու ձախը շատանց եւ իսկուպէս իրը եղած է : Երբ խօսի, իր վտիտ ձայնին մէջ ցատու մի ու ճշմարտութեան գոռ շեշտը կը շանթէ, եւ իր անժխտելի փաստներութիւններուն ցանցին մէջ. — փաստաբան ալ է եւ թո՛ւնդ, ըսի՞, — կապիպելէ ետքը իր ոտիւր, ըլլայ այն գրական թէ դատական, անոր բոլոր հակափաստերը կանխու թեւատելն ետքը, վերջին ճիշտով մը կը պգեանէ զայն անգիտակից :

Խիզախ՝ իր ոճը, այո՛ եւ ոչ միայն իր ոճը, այլ բովանդակ իր գրական կեանքը : Որովհետեւ գծուած կանոնէ դուրս բացառութիւն մը՝ բացառիկ կարողութեան գործ է : Յարձակելու պատրաստ նախապաշարումներու ու լեզուագարութեանց սլաքներուն տակ, իր խորունկ արհամարհանքը թքնելով անոնց երեսին, ուղածը պատմելը խորխտովին, խիզախ ոճն իսկ է :

Տօքարիւն, խռովքոտ, եփուն բնութեամբ մը օժտուած, բազմապէս կեանք մը ունեցած է ու կը վարէ ցարդ, ինչ որ իր պահանջկոտ, յարախորիս ու անյագ գգայութիւններուն դոհացում առէ զատ, իր խօսելու, գրելու կարողութիւններուն, տաղանդին մէկ խօսքով, աւելի բազմակողմանի,

աւելի անթերի, ապրուած հանգամանք մը կուտայ :

Իր անկեղծ ու անկաշկանդ ոճին, ու «մարմարեայ ծիծերով» շքեղ նկարագրութիւններուն համար է անշուշտ որ վերջերս Պօլսի հայերուն Զօլան ըրին զինքը, նմանութիւն մը որուն մէջ տասնըեօթը տարի առաջ Եղիան է նորէն որ չէ սխալած ողջունելով Անհեստացած սերունդին հեղինակը՝ իր արշալոյսի փայլին մէջ :

Քանի որ երկու անգամ Եղիան յիշակոչեցինք՝ Փոքորիկը սոսորագրողին լուսանկարին չըջանակ կազմելու ասթիւ, կը մղուիմ երկտող բազդատութիւն մը խիզախելու անոնց միջեւ, թէեւ իրարմէ հիմնովին տարբեր ու այլազիծ դէմքեր եղած ըլլան անոնք :

Եղիան՝ հիւանդ ու ջղային. Զօհրապ՝ առողջ ու ջղուտ, ֆիզիքսով ալ գրականութիւնով ալ :

Մէկը յաւէտ իր անգո՛հ դէպ ի տեսլականին կը թեւէ, միւսը իր միշտ դոհացուած ըզձանքին մէջ կը տեւէ : Սա՛ իր անհուն տենչանքներուն մէջը կը հատնի, ան՝ իր անյատակ վայելքին մէջ կը վատնուի :

Ինասասախրակաւ քառարանին խորհող հոկայ ու թովիչ կը ձախրէ : Երջանիկ մահը ստեղծողը՝ հզօր ու խռովիչ կը խոյանայ :

Առաջինը անհաւատարելի ելեւէջ մըն է մեր անձուկ գրականութեանը մէջ, մինչ երկրորդը անհասանելի զիկզակ մը :

Ըսի որ տղու մը կը նմանի ան : Տղու պէս ալ կը նայինք, կը հետեւինք իրեն ու կը շիտցունենք զինքը կը պաշտենք անոր քմահաճոյքները, կը հաւնինք անոր ծայրայեղութիւններուն, եւ այդ՝ մեր ամէնուս վրէժխնդրութիւնը կըլլայ, նախապաշարումներուն, կեղծիքներուն, banalitéներուն՝ մեզ ազդած ճանճրոյթին ու սրտնեղութիւններուն վրայ : Անոր ներսած է ամէն բան գրականութեան մէջ, Անոր ամենէն մարդ չսեպող, անպատկառ սեպուած, հողանի, հրայրքոտ ու խռովիչ գրուածները, փայլախոյանքներով, — որոնց արժանի է, սըրտանց կը հաւանիմ, — կը հրատարակուին, էն բարբարոյ եւ սրբաւէր թերթերուն մէջ իսկ, մինչ մեր՝ նորերուս, անձանօթներուս մէկէ աւելի գրութիւնները, — առանց նա-

խանձի, — նուազ կրակոտ ու աւելի սքողիկ, կը մեան ու կը սպասեն խմբագրական գրասեղաններու վրայ կամ դարակներուն մէջը, իրր «բաց բաներ» որոնց վարժուած չէ դեռ publicը եւ որոնց առջեւ կարժէ պահ մը խորհիլ:

Թիթեռնիկ մը անխոնջ որ վարդէ վարդ կը թռչկոտի անուշութեան ու բերանիտիսի ի խընդիր, եւ որուն բազմապահանջ ճաշակներուն փայլին վրայ միակ բիծ մը կը կազմուի եւ որ այնքան քիչ կարժէ սակայն, — փոփոխուածութիւնը:

Անոր անունը ձգտութիւն մը ունի: Հմայք մը կայ անոր գրեկակերպին, խորհեկակերպին, եւ ապրեկակերպին մէջ, Հմայած է ան, գրտն ալ, չգրտն ալ, բարոյամոյն ալ, հինն ալ, նորն ալ հաւաստարապէս:

Ամէն անգամ որ հիները շնորհ ընեն հաւնելու նոր գրականութեան զէթ մէկ մասին եւ հարկ տեսնեն անոնցմէ մէկը միայն մատ-

նանջելու իրր արժանիք մը, Զօհրապը ցոյց կուտան, — չես գիտեր ինչու, եթէ ոչ դիւթող մը բլլալուն, քանի որ իրենց ատած թերութիւնները, մեղքերը ունի ան, — ծայրայեղ զգուշութիւններով ան ալ, իրենց գրական ունելիին ծայրովը բռնելու համար զայն:

Իր եսեւեփող էութիւնը՝ մէկ արժանիք, իր ատղանդը՝ երկու արժանիք, իր անկեղծութիւնը՝ երեք արժանիք ինծի համար:

Վերջապէս հիները իրենց փուճ արհամարհանքին բարձունքէն իսկ, չեն կրնար կոր չհաւնիլ անոր. ժամանակակիցները զգուշաւոր ու զարմացկոտ հիացումով մը կը վերաբերուին անոր, մինչ մենք նորեքս՝ անվերապահ խանդով մը կը պաշտենք զայն, իր գրական ու սիրական խօսանքներովը, անկայնութիւններովը, հեշտասնդրութիւններովը ու իր մեղքերովը հանդերձ, — եթէ ոչ ատոնց իսկ համար:

ՕՆՆԻԿ ԶԻՅԹԷ-ՍԱՐԱՅ

“ՆՈՐԱՎԻՊԱԿ”

Տէր Խմբագրապետ

Մասիսի վերջնիթեր թուոյն մէջ Բիւրակնի յարուցած նորավիպական հարցին վրայ Ձեր ինձ ուղղած փափուկ գգուանոյժ հրաւերը՝ մայաւէտ վարդի մը սպաւորութիւնն ըրտ վրաս: Կ'ընդունիմ Ձեր հրաւերն, ոչ անտարակոյս առանց մեղամտութեան, իբրեւ հիւանդաց տան բնա՛կ մը՝ որուն անձկայրեաց աչքերը դուռնէն պատուհան ու պատուհանէն դուռը գա՛ն ու գնա՛ն անխափան: Ի զո՛ւր, բարեկա՛մ, բարետէր ու գեղատէր մեծանձն Յարութիւն Ալանեան էֆէնտին Հիւանդանոցին պարտէզն, հիւանդաց աչքն հաճոյապարտելու համար, կը գեղազարդէ բնիկ ու բացաշխարհիկ թանկագին լոյսերով ու ծաղիկաբոյսերով. անոնց մէջտեղ զոյգ աւազան մարմարեայ՝ մէկմէկէ հեռու՝ կը խորհրդապատկերեն ինձ ու բազմաց հիւանդաց համար զոյգ թռչուններն յունական աղելի-

ղիկ սիրերգին: Զուրը որ այդ աւազաններուն օգտաւարցիկ պորտէն կը ցայտէ, նոյն բարերարին ձեռամբ կանխաւ կառուցուած հոյակապ ջրամբարէ մը բաշխուելով առատօրէն բազմապատիկ Հիւանդանոցին եւ իր պարտիզին, ջուրը զով զուարթարար՝ ցնծանուազ ցայտամար կը ցայտեցնէ մայտօնեան ամենաթոյր ամենաբոյր պսպղումներն եթերային, երկնային եւ երկրային. բայց ի զո՛ւր. հիւանդին բոլոր ամիսներն ալ, մայիսինն ալ նոյեմբեր ու դեկտեմբեր են Բայց . . . հրաւերդ ունկանս կը հնչէ դարձեալ՝ Պարտիմ պատասխանել, ինչ որ կ'ընեմ՝ ահա, խօսքս ուղղելով գրասէր համակիր հասարակութեան:

Ս.

Խնդիրը լեզուաբանական անձուկ, բանականական անձկագոյն սահմաններուն է վերածուած, «նորավէպ» բառին ծագման

հետ ալ զըզտրդուած : Բանաստեղծ—իմաստասէրի խառնուածքս պիտի հեղձնուր հեղձամղձկէր որմտիակ այդ սահմաններուն մէջ ցամաք գեղացանցաւ : Ուստի պիտի բարձրացնեմ ընդհանրացնեմ հարցն : Այո՛, պիտի խօսիմ՝ բուն իսկ նորավէպին կամ վէպին վրայ ո՛չ թէ բառի մը կամ ոչ միայն բառի մը, այլ բառաշարութեան, բանաստեղծութեան, գրականութեան վրայ :

Գաւառնանքս հարկ է ուրեմն որ յայտնեմ նախ գրականութեան կամ իր ազդեցութեան վրայ : Տիեզերական պատմութեան վրայ խորին ուսումնասիրութիւններէս եւ կենաց ոչ յոյժ գիտացիկ այլ յոյժ զգացիկ փորձառութենէս մակածուած հոգեբանական եւ ընկերական ճշմարտութիւն մը պիտի ծանուցանեմ . ճշմարտութիւն, որ ոչ անտարակոյս խպառ պիտի եղձանէ խափանէ հանրապէս ընդունուած ու հանուր յեղեղուած ճշմարտութիւն մը՝ որ ամէն իմաստասիրական գրադատութեան գրքի սկիզբը կը յայտնուի, կամ եթէ հոն լռելեայն իմացուի, գրքին մէկ ծայրէն միւսն ապացուցանել կը նկրտուի : Հանրապէս ընդունուած այդ ճշմարտութիւնն է թէ՛ ժողովուրդի մը բարքերն իր գրականութեան վրայ կ'ազդեն եւ գրականութիւնն իր բարքերուն վրայ կ'ազդէ : Կը կրկնեմ՝ չեմ ժխտեր այդ ճշմարտութիւնն, այլ կէս կամ կեղծ ճշմարտութիւն մը կը նկատեմ զայն : Չափու կարեւոր խնդիր մը կայ . փոխադարձութիւնը բացարձակ չէ, ընդհակառակն : Ա՛յն չափով չազդեր գրականութիւն մը բարքերուն վրայ ո՛ր չափով բարքերը կ'ազդեն գրականութեան վրայ :

Կ'ընդունի՞ք, ընթերցողք իմ, որ գրականութիւնը ձեռով կը փոխուի ու սեռերով կ'այլազանի դարէ դար՝ կամ՝ ընդարձակագոյն բառով՝ գարաշրջանէ դարաշրջան, բարեշրջափուլէ բարեշրջափուլ : Կ'ընդունի՞ք զայդ իսկ ես ոչ միայն կ'ընդունիմ, այլ ժամանակաւ ըսած եմ ու դեռ մօտերս սոյն Հանդէսին մէջ խոշորագիծ պատկերացուցի գրական բարեշրջումն, ուր թերեւ շատեր վարմանօք տեսան թէ՛ գեղեցիկն իր բարեշրջութեան վերջին փուլին մէջ տգեղն ալ կը ներմարմնէ, մինչեւ մերթ՝ հաւատալի՞՞ բան՝ տգեղին

քով նսեմանալու ատիճան : Կ'ընդունի՞ք, այո՛, գրական կերպարանափոխութիւնն, որովհետեւ կը շօշափենք իսկ զայն, մանաւանդ գեղարուեստաց մէջ կը շօշափենք գեղեցիկն կերպարանափոխութիւնն : Այլ ես գրեթէ նոյնքա՛ն պայծառօրէն — ու մեղամաղձօրէն — կ'ըմբռնեմ մարդկային բնութեան անիփոխութիւնն հիմնական, որ ամէն ազդեցութենէ՝ գրական կամ բանական՝ կը վրիպի ու պիտի վրիպի յաւիտեան : Արարչութեան առաջին օրուան համազօր են մարդուն (մակղիրը դուք դրէք) ընազդներն այսօր ալ : Արդ . . . :

Արդ, ես կը մտածեմ, մակածօրէ՛ն ես այդ ճշմարտութեան հասած եմ թէ՛՝ անկեղծ գրականութիւնն ա՛յն է որ չունի վարդապետութիւն, որ նշանաբան մ'ունի եւ միմիայն տօրի . Արուեստ վասն արուեստի : Գրականութիւն մը որ բարքերու վրայ ազդել կամ հակազդել, որ՝ ի մի բառ՝ բարոյել կը յաւակնի, կը կեղծէ կամ ինքզինքը կը խորէ : Անտարակոյս, անիմաստասիրական, նոյն իսկ անընախօսական է վէճի տակ ձգել ենթակայի մը, ընթերցողի մը ընազդներն հիմնապէս եւ առ յաւէտ չեն անզօրիւր գրքի մ'ընթերցումէն : Իրողութիւնն ա՛յն է որ գիրքերն ալ, հեղինակին գիտակցութեամբ կամ անգիտակցութեամբ, մանաւանդ վէպ ու թատր ու քերթուած, ընթերցողներուն հօգիէն աւելի կամ հոգւոյն շափ զգայարանաց կ'ուղղուին : Հեղինակն, երբ անկեղծ է եւ մանաւանդ անկեղծութիւնն հրապարակելէ չի քաշուիր, լռելեայն կ'իմացնէ կամ միանգամ ընդ միշտ բացօթի կերպիւ կ'ըսէ թէ բարոյականի դասագիրք կամ բարոյագիրք բարոյավէպ մը չէ իր գօրծն : Ընթերցողն ալ երբ անկեղծ է եւ չը վախնար անկեղծ յայտարարութենէ, — կը զրուցէ ինքնին կամ ընկերին՝ ընկերներուն՝ թէ՛ կարդացած գիրքն իր կեանքն ու մարդոց անբաւ մեծամասնութեան կեանքը կը պատկերացնէ : Իսկ հեղինակն որ երկակ անձ է, եղողն ու երեւցողը, թաքնապէս կամ իսկապէս անբարոյիչ գրքի մը սկիզբն իրեւ յառաջարան բարոյաճառ կը փա՛յլեցնէ . ընթերցողն ալ, որ երկակ անձ է նոյնպէս, գիրքը կը նետէ «անբարոյակա-

նութիւն» աղաղակելով եւ . . . հեղինակին
յաջորդ երկին անհամբեր սպասելով :

* * *

Մասին ընթերցողներուն մէջ գտնուին
թերեւս որ չափազանց իմաստասիրական,
չափազանց ճշմարիտ գտնելով տեսութիւնս
կամ յուստեսութիւնս, թելադրեն ինձ նիւ-
թիս անցնիլ ու խօսիլ իրենց՝ վէպին վրայ,
նորավէպին վրայ, հայ վէպին ու հայ նորա-
վէպին վրայ : Վերեւ ջրած յայտարարութե-
նէս յետոյ, նոյն բանն է ինձ համար գրել
կամ չգրել. բայց որովհետեւ մինչեւ Հիւան-
դանոցը գրասիրաց կամ գրասիրուհեաց
խումբեր կու գան ինդրել որ գրեմ, կը հա-
ճեցնեմ ընթերցողներուս փափագը :


Վէպն եթէ ոչ իննետասաներորդ դարուն
ստեղծած գրական սեռն է, գէթ անոր զար-

գացուցած, անոր նախասիրած գրական սեռն
է հաւնադրական՝ ըստ տիրական հանգամանա-
նաց նոյն դարուն, ուր մարդկութիւնը ա-
ռաջին անգամն ըլլալով իր արտագրութեանց
ամբողջութիւնն յստակ աննախապաշար աչ-
քերով դիտեց, ու բերուեցաւ՝ այդ ամբող-
ջութեան տարերքն համախմբելով՝ այդ տա-
րերօք նորատեսողձեւ : Վէպն, ուրեմն, հա-
մադրական դարու մը տրամաբանօրէն հա-
մապատասխան գրական սեռն, յարաձուն ծա-
ւալում մ'ունեցաւ մինչեւ նոյն դարուն վերջն
ու մինչեւ նոր դարուս սկիզբն : Սկսելով սի-
րայինէն, բարձրացաւ հասաւ (եթէ սակայն
իրօք բարձրացում մըն է սոխ) մինչեւ գիտա-
կանի եւ իմաստասիրականի, եւ թերեւս կե-
նաց յաւերժանաց ընկերականին մէջ, ընկե-
րարանական պոսիվաւորմամբ :

(Շարունակելի)

ԵՂԻԱ ՏԷՄԻՐՃԻՊՍԵԱՆ

Ե Ր Կ Տ Ո Ղ Ե Ա Կ Ք



Ծորիճն օսնակոյս կ'ըլլան կախուէն :

— Անոյց հո՛սն իրենց մեղքն է . կը քաւեն . . . :



Երբ bull-dog մ'ըզեզ խածնէ, կուտս ու կոտս,
Զըլլա՛յ որ բսես դու մինչեւ իսկ . . . օ՛ջս .



Աղջկան արհն մեջ Սերն է խուճկ — նոյն իր...
Կը բուրէ, բայց տո՛ւտ կը դառնայ մոխիր :



Ենթադրով բերան — օդուռո՛յց փրփոց.
— Երնէ՛կ խուլերուն ոյց ախանջն է գոց . . . :



Երբ նախասէ զեզ գրո՛ղ մ'անձանձիւր,
Թո՛ւ՛ք անոր գրչին վրայ . . . եւ անցի՛ր :

Ա.Լ.ՓԱՍԼԱՆ



Մ Ի Թ Տ Ն Ո Յ Ն Ը

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐԻՍ՝ ԳԻՍԱԿԻՆ

Այն կողմը քաղաքը կայ, կ'ըսէին, որ գեղէն տարբեր ազրուոր տեղ մըն է: Հիւսիսի ժանգոտ լեռներուն ս'ր եւ է մէկ կէտին, կա տարքին վրայ, երկինքի դրացի բարձրութիւն մը:

Քաղաք, անունն ալ տարբեր, որու մասին հիացիկ բաներ լած էի ու կը սիրէի հաւտալ որ խարուած ալ չէի: Հայրս անկէ ինծի ատեն ատեն, իր երեք տղոցը մեծին, կա կաջի գոյնով սիրուն կօշիկներ կը բերէր, ու շաքարի, չամչի պէս գրպանի գալիք, քմառիկ բաներն ալ՝ աւելի աւելի բաներ մը՝ ու զածնիս բնականաբար, որոնց մէկ հատին տեսքն ու փրշուքին իսկ համը բուսական կ'ըլլար որ, երեք եղբայրներ, մտանայինք մօր ծիծիկն յուշքը ու մայրերնիս ալ, ու կատուի թաց դունչով մը, քաղքէն դարձող մեր անուշ հօրկան անուշ ձեռքերը լողըռտէինք:

Ու դեռ ինչե՛ր քաղքին ու քաղքոցիին վրայ, ի՛նչ մեղրիկ մտածութիւններ, որ օրը օրին իմ մէջն, վրդովիչ ցնորքի մը կը փոխուէին: Հոն ես ալ չպիտի՞ կրնայի երթալ: Քաղաքը, այն լեռան վրայ, տեսնելու անհուն փափագ մը ունէի: Բայց ի՞նչպէս: Գեղին դպրոցը կերթամ, դեռ պզտիկ իլէզ մը, գօտիս տեղը խանձարուքիս երիզը կը կապուի տակաւին:

Հազիւ ընտանեցած այս դպրոց ըստած չէնքին ներսի տարօրինակութիւններուն, ուր մութ երես դէմք մը, վարժապետը, անկիւն մը կը լեցնէր, սասկումը բոլոր դպրոցին, հազիւ հոս իմ տեղը, իմ երկու ծունկերուս վրայ, հօրս վաղահաս մահը հաշուի չառնուած անակնկալը եղաւ մեզի համար, ու մենք երեք եղբայրներս, այդ դէպքով մաղին տակը մնալու դատապարտուած հաւձագեր, ամէն օր ալ մեր պատճառները ունէինք վախնալու թէ՛ մեր բոյնին վրայ նոր սերտկան մը, ընտանեկան նոր ձախողանք մը, կրնայ ըլլալ որ մեզ

աւելի նոր, աւելի ծանր դժբաղդութիւն մը լացնել տան:

Ինչչափ կրնայի յիշել, մահէն չէր վախերնիս այնքան, որքան այն վատհօգի ազգական դէմքերէն, որ մայրս լանիւնոր էրիկի խրկելու խորհուրդ մը կը ձեւաւորէին մէջերնին սպասումով մը որ մենք ու մեր ունեցածները այդ կերպով իրենց ձեռքը, իրենց քմայքին պիտի յանձնուէինք:

«Ե՛լ, հերդէկի՛ր, կ'ըսէին, ի՛նչ իրաւունքով տղոցդ մալին վրայ նստեր, դուն քեզի օճախ կը մխրցնես, կնիկ մը, չես ամչնար, դպրոցը տղայ ալ կը խրկես», մինչ, ըսել կուզէին, կրնայիր անոնց ամէն մէկը հոս հոն մշակ տալ. մեզի ձգել տունն ու ստացուածքը, ու դուն քեզի համար ալ կա՛մ էրիկ մը գտնել կա՛մ շլիքիդ յարմար խեղցող չուան մը:

Գեղի բարքերէ հասկցող մը միայն գիտէ, թէ՛ այդ տույն ծածքերուն տակ, այդ ցածկեկ գետնայարկերու մթութիւններուն մէջ ամուսնին մահը լացող կին մը շատ անգամ իր կորուստին առջի իրիւնէն սկսած, ի՛նչ ցաւերու կենթարկուի, ու ասոնց ամբողջութիւնը ի՛նչ անհազին ծանրութիւն, որուն նա յիշով, իր ալ սղջ սղջ թաղուիլը երջանիկ դէպքը պիտի մտածէր: Ու ըսէինք, այրին, երբ քիչ մը հեղինակութիւն, քիչ մը կորով, ճարպիկութիւն ունի իրաւասութեան հաշուով մը, իրեն ու որբերուն չահերը պաշտպանելու դուրսէն երկնցուած ձեռքերու հանդէպ, նախ անոր երեսին ակապ կճոցնող մարդիկը իր տագրը ու տագրոգիի պէս մերձաւորները կ'ըլլան, վերջն ալ, նենգաւոր հետեւողութեամբ, էրկան կողմէն ալ հեռաւոր ազգականները, որ իբր թէ՛ իրենք ալ մեռնողին որբերուն վրայ սրտանց կսկծացողներ, խորհրդաւոր, պատրաստ տրամադրութիւն մը ունին, որ որբեւարին, ա՛լ իբր օտար

կամ իրր մանաւանդ կասկածելի , չար ոգի մը հետզհետէ իրենց ցեղին արեւը մթնցնելու սպառնացող , ծախեն զայն հանդիպողի մը ու ըմնան :

Մեզի ալ աս փորձանքը կար , տագնապ , մամուռք ամէն օր , երբ մեր ալ բարեկամի ժպտաներով այդ խորամանկ ագետորները , մայրերնիս տակաւին իր սուգովը քողքուած , իր շուքն ալ շէր տեսներ դռնէն , երդիքէն ներս կը խուժէին , ճախրակը առջեւէն մէկգի նետելով , պահանջող կ'ըլլային որ իրենց հետեւի , էրիկն ալ գտած էին , 25-30 ոսկի տուող գնորդ մը : Դրամը , իրենց ձեռքը , իրենց մէջը պիտի բաժնէին , անկէ շատ քիչ մաս մըն ալ դժբաղդ կնոջ բաժինը պիտի ըլլար : Բայց թէ որսէ հետ էր որ խաղաղութեան էր էին , այս յիմար որձերը շատ ուշ կրնային հասկնալ :

Քուար այս անխմատ արտաւոց հետամտութիւնները սակայն , բոլորը փրփուրներու նշաւակ , որ ժայռին կուրծքին վրայ կը մեռնին , տեղ չի գտան երեք ու տեղ մըն ալ չի կրցան բռնել :

Զաւակներու սէրը գեղջուկ այրիին սրտին մէջ , իր վարժածանին կորուստէն ետքը մանաւանդ աւելի սրող յայտնութեամբ մը , այնքան անհամեմատ կերպով ծաւալ բռնած , անձիր , անձայր մեծութիւն մը առած էր , որ բոլորին դէմ ալ մաքսուելու ոյժը կուտար իրեն :

Այս կերպով ահա մենք մեր մօրը կը մնայինք ու մայրերնիս ալ մեզ իր թեւերուն տակը , մարի արծիւի մը քունը կը քնանար :

* * *

Կանցնին ասոնք ալ , ես նորէն գեղի դըպրոցը , իմ տեղը կը գտնեմ , նոյն վարժապետը , ուրիշ պզտիկ ձայն մը միայն , յանդիմանողի թեթեւ հունչ մը տղոցը հասցէին , պատերուն շաղախը վար կը բերէր , բայց ո՞վ էր վախցողը , ես իրեն մէկ հատիկ ձայնաւորն էի , շարաթը անգամ մըն ալ մեծկակ փարջով էգիի կաթ-գինի կը տանէի , որուն տեսակը ուրիշի մը տունը շէր կրնար խմել : Ծառ տան մեր հաւրունին հաւերն ալ աս վարժապետին անունը կերգէին թարմուկ հաւկիթ-

ներու յանկերգով մը : Այս տեղ , վերջին գիրքը աւարտած , ինչ որ կրնայիք ըմբռնել , աւուր մեծ գործս ընդհանրապէս «Սուրբ սուրբի ու Տէր սղորմեա»ի եղանակներուն վարժութիւնն եղած էր : Կը ճարձրանայի բնականաբար : Մարդը կը պահանջէր որ կիրակի առտուները իր մութերեւը ճերմկեցնողը միշտ դպրոցին մէջ ու իր մօրը գտնուէր . ճանձրանալ , իր ի՞նչ փոյթը , եթէ ես խելք չընէի ու չի փախէի ատեն ատեն , հունս պահ մը սիրական որիներուս հաղ-վախքը հարցնելու :

Ու դուն , տես որ , սիրելիդ իմ Գիտակ , աս «Տէր սղորմեա»ն , դէպ ի վերերը իրկած , ան միամիտ նուակներս (աղաղակ) , ինչպէ՛ս կ'ըլլար , պարագութեան մէջ չէին ցնդիր :

Գպրոցը անգամ մը , քաղքէն այցելու մը կ'երեւայ , ոտքէն գլուխը շնորհքով հագուած մարդ մը : Վարժապետը ասոր պատիւ մը ընելու համար , ձայնաւոր տղոցը վրայ աչք մը կը լայնցնէ , հրամանը կը հասկնանք , ու ամէնքս ալ ոտքի , վազելու պատրաստուող բարակներու շտկաւորածքով մը , երգերու շարք մը ըմնցնելէ ետք , առանձին ինձի փաղաքուչ ակնարկ մը կը գտաէ , որ ես քիչ մըն ալ առաջ անցնիմ ու նոր սորված Տէր սղորմեաի մը երգողն ըլլամ :

Ի՞նչ եղական պատեհութիւն , քաղքին մարդը իմ ձայնս պիտի լսէ , եթէ հաւնի , վերջն ալ ես իրեն չպիտի՞ կրնամ ըսել որ զիս ալ իր հետը , քաղքը տանի :

Այն լեռը , այն քաղաքը ու հիմա այն քաղքին մէկ ուրիշ բանը , դպրոցը մօտէն տեսնելու փախազս , ծովուց վրէն ճամբորդող լուսնակին աղբար ըլլելու փախազս , բուն ըրձանքս կը մնայ : Հոն ես ալ չպիտի՞ կրնայի երթալ :

Այցելուն , բարի մարդ ու հրեշտակ մը գուցէ , հաւնած էր ձայնիս , մէկ օրէն միւռը , ժամանակ ալ չանցնիր , մէկէն աչքս բացի որ տունէն զատուած , ընկերներէս ու թռչուններէս զատուած , այն մարդուն տունը կը գտնուիմ : Քաղքն ա՛ս է եղեր :

Ատ օտար ծածքին տակ , առաջին օրուան յուզումներս . . . :

Դաշտէն բռնուած արտուտ մը , զոր տես-

ներու համար հերիք չէր կարծես աս տանը մարդերուն վրաս խոնուիլն ու զիս խօսեցնելու ցոյց տուած նեղող հետաքրքրութիւննին, դուրսնեքէն ալ մարդ կը կանչէին, որ ուրիշներ ալ գային ու արգահատելին հետ գեղեցիկ տարօրինակութիւնը տեսնէին :

Ատ օտար նայուած քներուն տակ, շունչս կը լռուէր ամչնալուս, որ ատեն եթէ չի փղձկէի, եթէ չի փլէր սիրտս, ես ալ առիքին դառնեկները պիտի համրէի, որ խիզճ ընէին, քիչ մըն ալ ուրիշ կողմ, ուրիշ բաներով մը երթային, հետաքրքրուէին :

Կը հասկնայի թէ՛ չի տարուելիք վիճակ մըն էր աս, բայց ալ անգամ մը եկած էի ու վանդակն էր լոյնս : Ես ո՛ւր, իմ սոքերս ո՛ւր, իմ թողած պուրակներս ո՛ւր :

Միեւնոյն վարմունքը դպրոցի տղաքներէն ու ասոնցը աւելի անողոք անհարկութիւններով : Մէկը զպուսիս կարմիրը կը ծաղրէր, ան միւսը դէմքս ու մազերուս կտրտուած քը, որ գեղի տձեւութիւններ ու իրենցինին նման չէին գտներ : Ուրիշներ ալ, զիս խօսեցնելու պատրուակ մը գլելով, բառերս ու հնչումներս կը ծաղրէին :

Կը խենթեցնէ՞ն — քիչ կը մնար, ուրիշ աղատելու համար սիրով յանձն պիտի առնէի, որ մերկ կունակով, խուրճ մը փուշ շալկեմ ու դէպի լեռը, դէպի ձորը երկար երկար ճամբայ մը քալեմ : Դպրոցն ալ աս էր, Գիսա՛կ, որուն կը յիշէիք թէ՛ ձեմարան⁽¹⁾ անուն մըն ալ կը արուէր : Երկու յարկէն, պզտիկ սիրուն չէնք մը, ներսը ճերմկցուած պատերով, պատուհաններն ալ թուղթին տեղը ապակի անցուցեր էին, որոնք ես քիչ մը մեր գեղին ժամուն մէջ տեսածներուս կը նմանցնէի ու չի զարմանալ ալ չէր ըլլար : Այսչափ :

Թէ ներքնապէս ի՛նչ կարգ, ի՛նչ կազմակերպութիւն, ի՛նչ ուսումնական ընթացք կար, կը գործադրուէր, որ թողած դպրոցէս տար-

բեր՝ սրվոր ձեմարան անունը հեգնութիւն չերուցնէին : Ես այս նկատմամբ բան մը չեմ գիտեր : Գեղի դպրոցէն անով կարելի է կը վատուէր որ մէկին տեղը հոս երեք վարժապետներ կային չորս աչքերով, մէկը կոյր մըն էր, Հէքեաթի դասերը, սրբազան պատմութիւն եւլն. ասոր յանձնուած, միւս երկուքն ալ հայերէն քերականութիւնն ու թուրքերէնը բաժներ էին մէջերնին : Վերջին երկու դասերուն անունները տրուելու ատեն, սրտիս դրառուքը մուրճի ձայն մը կը լսցնէր ականջիս :

Իրաւ է որ ես շատ ատեն ձայնովս դրառած, պահանջ մը, ուրիշ չէի կրնար ազատիլ, յետնորդ միջակութիւն մը կերեւայի կարգիս մէջ, բայց ուրիշներն ալ, նոյն իսկ շատ ալ մտացի ճանչցուածները, կը զգայի թէ՛ շատ ցայտուն առաւելութիւն մը չէին ցուցներ միեւնոյն դասերուն մէջ :

Հիմա, ցաւալի խոստովանութիւն, հիմա, շատ ուշ եկաւ ժամանակը բուն իսկը յայտնելու . թէ՛ իրենք այդ վարժապետներն ալ տէրը չէին ամենեւին իրենց դասախօսած առարկաներուն, որոնց աւանդումի կերպերու մասին, իրենց անճրկութիւնը դարձանելու համար, կամ ան էր որ, ճիւղտին ծէրը կը չալլէին կուրծքերնուս, եւ կամ՝ մեր չի հասկըցած ճիւղի ճնշառի բառերով երեսնիս կը ծաղկէին, ուսաս, անխաւ, խաւաւանի ծնունդ, հայերէնի ուսուցչէն միտքս մնացած նախատող բառերը, եթէ ինքն ալ, Սարգիս Սողիկեան, հիմա պիտի կրնար յիշել :

Աստուած կուտար, որ Եազըճեան, գրողի համբաւ հանած՝ դպրոցին մէջէն մինչեւ օրուան Առաջնորդարանին դուռը, ուր կարծեմ, նորէն հիմակուան «մնամ աղօթարար»ը կը կենար, իր ըմբռնած ձեռովը գրելու փափագ մը կարթնցնէր մէջերնիս :

Դուն ու քեզի հետ եղողները դպրոցին ու դասատուներուն ընտանի քիչ շատ զարգացածները կը սեպուէիք, ես ձեզի վարէն կը նայէի : Բայց որովհետեւ գեղը կ'երթայի երբեմն ու ինձմէ հէնց պարզ նամակ մը գրելու պահանջներով, ձեռքս բերնիս վրայ կը մնար, դարձիս ստիպուած կըլլայի որ ձեզի հետեւող ըլլալու համար, ես ինքս ալ իմ

(1) Սմբատեան ձեմարան, որուն ծնունդ տուող դէպքը կ'ըսուի, Անարոն վարդապետի մը հոս առաջնորդ գալը եղած է : Ատ առիթով, Պոլսէն իր հետ բերած է եղբր երեք նշանաւոր ուսուցիչներ՝ Աբրահամ Այվազեան, Տիգրան Մանաւեան, Բարձր թաթարեան : Մեզի անձանոթ պատմութիւն մըն էր աս, որուն լուսարանուած մանրամասնութիւնը պիտի խնդրէինք որ Աբրահամ էֆ. Այվազեանը տար :

գրեալս փորձերուս հետ, առանձին օրկրնս(°) ունենամ :

«Թռչնիկ» էր իմ ձեռագործարիս անունը, սիրածներուս անունը, չէ՛, շատ հեղ չի կրնալով լեցնել մինչեւ վերջին երեսը, ու չարած օր, առենին ընկերներուս բերել, ուրբաթ իրիկուընէ գաղտուկ մը Եազըճեանին դուռը ասի կանէի, ինչպէս արդէն հիմակուաններն ալ տարբեր բան մը չեն ըներ — կը խնդրէի որ թերթիս չարագ երեսը լեցնելիք գրուածք մը տայ իրակն : Կը դիժանիմ որ մինչեւ ձեռքն ալ պագնեմ, եթէ ոչ, վաղը, համողը մատը աչքս պիտի խրէ ու ես պատասխան մը չպիտի ունենամ, Կանէի ուզածս, բերան մը երգելու գնով, որ իր պահանջած փոխարժէքը պիտի ըլլար, կամաց մը տեղս կը դառնայի, ու առտուն իմ «Թռչնիկ» ալ իր լարուած թեւերովն ու կտուցովը, իր տեղը, խօսելու կարգ մը կուենար : Սակայն հիմա ալ աս անփափականիատ պաշտօնակիցներս, խնդուքի ուրիշ պատճառներ մը կը փաթթէին մատերնին, որոնց հանդէպ, պաշտպանողականներս, բանակի թեթեւ կզնիկներ, բան մը չէին արժեք ու որքան աշխատէի երեսի բունելիք յարմար բանածեւ մը գտնել, այնքան խաղաթիւնն ալ մեծ կըլլար : «Նորէն օտար փետուր, եթէ վերջապէս ատ է ընելիքդ, կ'աւելցնէին, վիզիդ բոլորքը կրնայիր ջորիի բաժնիներ ալ կախել» :

Վրաս է՛ն կատաղի յարձակողներն էին, Հիւսէյնիկցի Արիստոտէլն ու Սինամուացի բանջարաքաղը, որ ջղուտ միտք մը ունէր ու

գորտարը քակելու համար ալ սուր արօր մը : Իսկ քեզ ու քու հեղնութիւններդ մէկդի հրելու համար, հրեայի վէճ մը կը ձգէի լեզուի տակ, այս կերպով բոլոր տղաքը ինծի հետ, քու տետրակդ կը քննադատէինք : Դուն սակայն հեշտով չէիր ընկճիր, ու բաւական առատ սրաչար ունենալ կը ցուցնէիր քու գիրքէդ վար չիջնելու :

* * *

Վերջը, սիրելի՛ Դիտակ, մանկութեանս գարուններուն յաջորդող ժամանակներէն վերջը, մինչեւ հիմա, թէ ի՛նչ եղան կեանքիս շրջանները, ո՛ր գացինք, ո՛ր մնացինք, հոգիս ի՞նչ գոհացում դտաւ, ո՛ր հեռապատկերներու հանդէպ ու վայելքը ի՛նչ աստիճան : Տարիին մէջ քանի՛ օր ունեցայ խնդկատ, քանի՛ շապիկ կունակի վրայ, որ մետաքսին քնքշութիւնը վզացընէր ու կոշիկներն ալ քանի՛ վոյգ, որ փուշերէ ազատ պահէր ոտքերս : Շատ երկար ու գուցէ շատ ալ ձանձրացուցիչ պիտի ըլլար ասոնց բոլորին պատմութիւնը մէկ մէկ, ինչ որ ես հիմա սիսեռի տերեւուկի մը վրայ խտացնելու ու փակելու փորձն էր որ ըրի : Հիմա ալ ճիշդ աս պահուն, անյագ, անգոհունակ բան մը կը խաղայ հոգիէս, երբ լուրջ ամփոփումով մը խորհող կ'ըլլամ թէ՛ ան գեղէն աս քաղաքը, սարդի կարճ ճամբորդութիւն մը, նշանակելի վերելքը չեղաւ ինծի համար :

Խարբերդ ԹՎԿԱՏԻՆՑԻՆ

“ՆՈՐԱՎԿ”ԻՆ ՇՈՒՋԸ

Նորավիկայ բառին շուրջ յարուցուած վիճարանութեան առթիւ Ռ. Պէրպլերեան էֆ. Ինստիտուտի շարժումն Մախիսի մէջ հրատարակած Դիտողութեան մէջ մեծ գարնանքով կարդացի թէ իրրեւ բուն իսկ իմ խօսքերս չակերտի մէջ աւանդով առաջ բերուել են հետեւեալ խօսքերը . «Նոր բառը սովորաբար բայարմատներու հետ կը միանայ կամ կը բար-

դուի, եւ հետեւաբար նորավիկայ բառը մերժելի է իրրեւ մեր լեզուին բառաշինութեան հակառակ խուժողութեւ աննշանակ կազմութիւն մը» :

Չեմ կրնար հաւատալ թէ Պէրպլերեան էֆ. կամաւ ուզած ըլլայ խեղաթիւրել իմ խօսքերս, ինծի վերագրելով ա՛յնպիսի կարծիքներ՝ զորս ո՛չ յայտնած եմ եւ ո՛չ իսկ մտքէս անցու-

ցած : Կենթադրեմ որեմն թէ Պէրպէրեան էՖ. Բիւրակնի մէջ իմ գրածս չէ կարգացեր ու միայն Իւթիւճեան էՖ.ին Մասիսի մէջ ըրած մէկ համառօտ անհարկութենէն դատելով այս թիւրիմացութեան մէջ կիցնայ :

Ես երբեք ըսած չեմ թէ նոր բառը բայարկաններու հետ կը միանայ , թէ գոյականի հետ չի բարդուիր , թէ նորաձեւ բարդութիւնը սխալ է , խուժողութ է , կամ հակառակ հայ լեզուի օրինաց եւայլն : Իմ ըսածս այն էր թէ նորաձեւ բառով եթէ հասկցնել կուզուի գոյականաբար «նոր վէպ» , դժուար է այդ նշանակութիւնն ընծայել անոր , երբ համեմատենք նմանօրինակ բարդութիւններու հետ , գորօրինակ՝ նորագիտ , նորաշուր եւլն որոնք ո՛չ թէ «նոր գիւտ» , «նոր լուր» կը նշանակեն , այլ «նոր գտնուած» , «նոր լուած» . հետեւաբար նորաձեւն ըստ այնմ պէտք է որ նշանակէ կա՛մ «նոր վիպուած» , կա՛մ «նոր բաներ վիպող» , ինչպէս քաղցնաձեւն որ «չառ բաներ վիպող = պատմող» ըսել է : Կը հասկըցուի որեմն թէ վիպը հոս աւելի բայարկան կրնայ ըլլալ քան գոյական , եւ նորաձեւն ալ ինքնին՝ ածական մը որ գոյականի մը ընկերակցութեան կը կարօտի ամբողջական իմաստ մը տալու համար . գորօրինակ՝ կրնանք ըսել «նորաձեւ պատմութիւն» (=նոր վիպուած պատմութիւն) , ինչպէս կըսենք «նորաչին տուն» (=նոր շինուած տուն) , կամ «նորաձեւ մատենագիր» (=նոր բաներ վիպող մատենագիր) ինչպէս կ'ըսենք «նորասէր կին» (նորութիւնները սիրող կին) եւլն : Բայց միեւնոյն բանը չենք կրնար ըսել անշուշտ Պէրպէրեան էՖ.ին մեզի դէմ իրրեւ փաստ առաջ բերած նորախաղախ , նորահարսն , նորասունկ բառերուն համար — թէ եւ վերջին բառն աւելի նոր տնկուած կը նշանակէ՝ քան թէ «նոր տունկ» . Գ. օր. «նորատունկ ծառ» — որովհետեւ նորախաղախ , նորահարսն այնպիսի բարդութիւններ են՝ որոնց գոյականաբար «նոր քաղաք» , «նոր հարս» նշանակութիւնը միայն կրնանք ընծայել , զի խաղախ եւ հարս յաւէտ չեն կրնար բայարկան ըլլալ :

Ուրեմն խնդիրն այն չէր թէ նոր ածականը վիպին հետ կրնա՞ր միանալ թէ ոչ . թէ այդ բարդութիւնը հայ լեզուի օրինաց համաձայն էր թէ ոչ , այլ այն թէ անխուսափելիօրէն «նոր վէպ» նշանակութիւնը կրնա՞ր տալ . . . Մէկ խօսքով նորաձեւն կազմութիւնը չէր որ քննադատեր էի , այլ անոր ընծայուած նշանակութիւնը : Հետեւաբար Պէրպէրեան էՖ. պարապ աեղը յոգնութիւն յանձն առած է Բագրատունիին Չարգացեղաց Բերականորթիւնը տակնուվրայ ընելով շարեւրտ սիւնակ մը լեցուն օրինակներ՝ ապացուցանելու համար թէ հայերէնի մէջ ածականները գոյականներու հետ ալ կրնան բարդուիլ եւ ձեւացնել նորիմաստ գոյականներ , — քերականական դատ մը՝ որուն գոնէ մենք պէտք չունէինք եւ որուն հակառակ Իւթիւճեան էՖ.նտին ալ բան մը ըսած չէր արդէն :

Ես սակայն՝ ինչպէս ասկէ առաջ ալ գրած էի , նորաձեւն բառն ու իր նշանակութիւնը սխալ ըլլայ կամ շիտակ , նմանօրինակ կարգ մը բառերու պէս տարիներէ ի վեր գործածութեամբ այն աստիճան նուիրագործուած է որ պատճառ մը չկայ հիմա զայն ուրիշ որ եւ է բառով մը փոխանակելու եղել . եւ եթէ ես այդ բառին նշանակութեան ո՞ր աստիճան ճիշտ ըլլալուն նկատմամբ կարծիք մը յայտնէր էի , պարզապէս եղած հարցման մը պատասխանելու համար էր միայն , ու ո՛չ թէ նորաձեւն վտարելով անոր աեղ ուրիշ բառ մը զնեւ փորձելու համար , փորձ մը որ արդէն իսկ անյաջող ու ծիծաղելի պիտի ըլլար :

ՅՈՎ.Է. ԳՈՋԱՆՃԵԱՆ

ԿԱՐՈՂ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ մը որ դասախօսած է թէ՛ մայրաքաղաքիս եւ թէ՛ գաւառային վարժարաններու մէջ , արամազիր է պաշտօն ստանձնել գաւառային աղջկանց

վարժարանի մը մէջ՝ իրրեւ տեսչուհի եւ ուսուցչուհի :

Դիմել Մասիսի Խմբագրութեան :

ԿԷՍ-ԲԺՇԿԱԿԱՆ

«ՏԱՐՕՐԻՆ Ա.Կ ԺՈՂՈՎՈՒՐԴ»

Հոնտոնի կեդրոնական դատարանին առջեւ վերջերս տեսնուեր է հետաքրքրական դատ մը, որուն հերոսներն են Անգլիայի մէջ ամէնուն ծանօթ «տարօրինակ ժողովուրդ» ըստած աղանդէն երկու անդամներ, հայր մը եւ մայր մը: Դատավարութեան մանրամասնութիւններն անխտիր հետաքրքրած ըլլալու են անգլիական լրագիրներու ընթերցողները, եւ յայտնի է թէ խնդիրը կարեւոր նշանակութիւն ստացած է ամբողջ Բրիտանիայի մէջ, որ բժշկական կարեւոր Հանդէս մը խի պէտք տեսեր է առանձին խմբագրականի մը նիւթ ընել զայն:

Սորհելով որ նոյն խնդիրը շատ տեղ եւ շատ հեղ մեր մէջ ալ կը ներկայանայ՝ կ'արժէ մեր ընթերցողներուն երկու խօսքով պատմել մանրամասնութիւնները:

Այդ «տարօրինակ ժողովուրդ»էն երկու հոգի, էրիկ մը եւ կնիկ մը, դատի կ'ենթարկուին սա՛ ամբաստութիւնով թէ իրենց զաւկըներուն զլացած էին բժշկական խնամք, ուստի եւ պատժուելու էին ոճրագործական օրէնքին տրամադրութեան համաձայն: Դատարանին առջեւ կը յայտնուի թէ ասոնք տասներեք զաւակ ունեցած են, որոնց հինգը մեռած են առանց բժշկական ո՛ր եւ է խնամք կամ դարման ընդունելու: Դատավարութիւնը գլխաւորաբար կը դառնայ վերջին կամ հին գերորդ մեռնող տղեկին պարագաներուն վրայ: Այս վեցամսեայ մանուկը հիւանդանալուն՝ կը կանչուի այդ նոյն աղանդին պատկանող «երէց»ը, որ իրենց ստփրութեան համաձայն իւզով կ'օժէ հիւանդը եւ վրան կ'աղօթէ, ու հարկ չկայ ըսել՝ տղեկը կը մեռնի հակառակ դարմանին, քանզի իր հիւանդութիւնն էր թոքառտապ, ու գէթ դարմանումի առաջին մասին համար ամէն մարդ կը վկայէ թէ պէտքին պահանջուիլ չէ:

Կը գուշակեմ թէ ընթերցողներէս շատեր

մինչեւ հոս ա՛յնքան դատապարտելի բան մը չեն դտներ այս ծնողքին վարմունքին մէջ: Հոնտոնի դատարանը, սակայն, քիչ մը տարբեր խորհեր է. դատաւորներն ընդունելու են թէ մարդասպանութեան դատ չէին կրնար բռնալ այս հօր եւ մօր դէմ. բայց շարունակելու են դատը սա հիման վրայ թէ այդ տղեկին ծնողքը պարտաւոր էին դիմել հրահանգի, եւ այսպէս չընելովն՝ անպէտ չարչարանքի ենթարկած էին իրենց զաւակը: Ու դատաւորները իրենց վճիռին աւելի շոշափելի ձեւ մը տալու համար՝ հայրը կը դատապարտեն քսան անգլիական օսկի տուգանքի, ու մայրն ալ՝ պէտք եղած առան նորէն դատարանի ներկայանալու:

Այս է ահա Հոնտոնի դատարանին տուած վճիռը ա՛ն ծնողքներուն դէմ, որոնք բժիշկ չեն կանչել իրենց տղաքը խնամելու դարմանելու համար: Հանրային կարծիքը սակայն ասիկա ալ բաւական չի նկատել ու անգլիական շատ մը թերթեր կը պահանջեն որ այսօրինակ պարագաներու մէջ դատարանը աւելի խիստ ըլլայ, որպէս զի խրատ ըլլայ նաեւ ուրիշ անհոգ կամ վերնադրիս բառովը «տարօրինակ ժողովուրդ»ի:

Այս դէպքը կ'արձանագրենք հոս, որովհետեւ ինչպէս արդէն ըսի քիչ մը վերը, մեր մէջ շատուոր են ան ծնողքները, որոնք ալքատութեան քիչ մը արդարանալի պատճառէն զատ՝ ուրիշ հազար ու մէկ պատճառանքներ կը ստեղծեն իրենց հիւանդներն առանց դեղի ու դարմանի գերեզման զրկելնին արդարացնելու համար: Վստահ եմ թէ բժիշկի մը կողմէ գրուած այս տեսակ յօդուած մը «անձնական շահ» պաշտպանելու պէս բան մը պիտի նկատուի: Բայց առիթը կը ներկայացընէ անգլիական է՛ն նշանաւոր եւ ըսե՞՞մ նաեւ է՛ն արդարամտ դատարանը: Մնաց

որ բժիշկները ժողովուրդին խօսելու իրենց արդար իրաւունքը ունին, մանաւանդ երբ ժողովուրդը բժիշկներուն դէմ խօսելու եւ զանոնք բամբասելու ատիթը երկեք ձեռքէ չի փախցաներ :

ՅՈՒՔԹ. ՅՈՒՎ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ.

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Ս. Հայրապետք այս օրերս պիտի այցելէ Պետրապոլոյ եւ Աստրախանի թեմերը, — Տ. Արիստակէս արքեպիսկոպոս Սեղրահեանց. Աստրախանի այժմու առաջնորդը, որ Պարսկաստանի Հայոց առաջնորդ ընտրուած էր, գրաւոր հրատարական զրկած է Ս. Կաթողի կոսին :

Հեսաբրաւուած երկու լուրեր կը հաղորդէ մեզ Ուրֆայէն Ք. Կ. Ո., ապրիլ 28 թընուականով .

«Ուրֆայի Կարմունջ գիւղի ազգայիններէն Յակոբ Արծիւեան անուն անձը՝ վերջերս հնարած է մէկ գրաստի միջոցաւ դարձող նոր մեթոտով աղօրիք մը՝ որ ջրագացի մը չափ արագ կը գործէ : Այս անձը՝ ճարտարապետութեան մասին ալ յաջողակ է : Վարպետ չունի. բնական սրամտութիւնն է իր թելադիրը : Այդ գիւտը՝ ինչքան ալ չքոտի բան մը բլլայ՝ համեմատուելով զարգացեալ կեդրոններէն ամէն անգամ լաւող կարեւոր գիւտերուն հետ, արհամարհելի չէ կարծենք՝ քանի որ հնարուած է շատ նահապետական անկիւնի մը մէջ՝ դուրսերու հետ անհաղորդակից ապրող ու նիւթական կարողութենէ զուրկ անձի մը կողմէ : Պէտք է աւելցնենք՝ թէ նոյն համեստ գիւտը՝ հնարողին համար շահաբեր կրնայ ըլլալ մանաւանդ այս տարի, քանի որ տիրող երաշտութեան բերումը՝ ջաղացքները հիմակուրնէ կիսադադար վիճակի մէջ կը գլուտուին :

«—Եղեսիայէն Ռագդա գացող Պետրոս անուն աղքատ Հայ մը, վերջերս աւերակոյտ մը պողովակելով գտած է վաղեմի կաղամար մը՝ իր կազմուածքով, զոր 10 լիւրայի ծախած է իրմէ բանգէտ Արարներու, եւ այս վերջիններն ալ 500 լիւրայի փոխանակած են այդ կաղամարըը Հալէպի մէջ :

«Պետրոս միւս կողմէն՝ նոյն խալ 10 լիւրայի չահէն շրանալով՝ ընկերոջ մը հետ նոր փընտուածքներու ձեւնարկած՝ ու իրկուն մը յաջողած է հետքը գտնել առջինէն աւելի կարեւոր հնութիւններու, որոնց մէջ կը գլուտուին՝ հնութեան տեսակէտով մեծարժէք ջրաման մը (եղպրոզ) իր կոնքով » :

Ս. Պատրիարք Հայրը երկուշարթի օրը Ղալաթիոյ Մատենադարանին մէջ — որուն կանոնաւորումը Իզմիրեանց Յանձնաժողովին յանձնուած է — խորհրդակցութիւն մը ունեցաւ Գարրիէլ էֆ. Նորատուեկեանի հետ որ ատենապետն է այդ Յանձնաժողովին. երեքշարթի օրն ալ Ն. Սրբազնութիւնը Պատրիարքարանի մէջ խորհրդակցութիւն մը ունեցաւ Կրօն. ժողովի երկու ատենապետ Սրբազաններուն հետ, օրակարգը գտնուած եւ կեղեցական խնդիրներու վրայ, վասն զի ժողովը չկրցաւ գումարիլ՝ մեծամասնութիւն չունենալուն պատճառաւ :

Ուսուցիչներու Օգնութեան Սնտուկի մը հաստատման ծրագիրը, որ Ուսումն. Խորհուրդին կողմէ ներկայացուած էր Քաղ. ժողովին, յանձնուեցաւ Ստեփան փաշայի նախաքննութեան : Տարակոյս չունինք որ Ստեփան փաշա մանրակրկիտ ուսումնասիրութեան մը բովէն անցընելով գայն, — մասնաւորապէս կեանքի ապահովագրութեան ընկերութենէ մը ռեֆչանի փոխարէն գումար մը ստանալու տրամադրութիւնը, որուն մէջ արժանապատուութեան խնդիր մը կայ Պատրիարքարանին համար, — աւելի գործնական ու պատշաճ ձեւի մը վերածուած պիտի վերադարձնէ գայն Վարչութեան :

Արեւի շարթական տեսութիւնները վերսկսան երեւալ Արեւելջի մէջ ուր այսուհետեւ ամէն երկուշարթի հաճոյքը պիտի ունենանք կարգաւու վաղածանօթ գրողի մը զիտողութիւնները կամ անհատուցները օրուան հարցերու վրայ — Պատրիարքարանի եւ անոր ժողովներուն շուրջը զլիստորարար :

Մանգուլիէի Էֆեսաք օրթերթին գլխաւար խմբագիր Միսաք էֆ. Սուրեան, Ստամբուլի Ս. Սահակեան եւ Նունեան երկուս վարժարաններուն Տնօրէն կարգուած է՝ պահելով հանդերձ իր ուսուցչական պաշտօնը այդ վարժարաններուն մէջ :

Սուբհանդակ իր չորեքշաբթի օրուան Ազգ. Քրոնիկին մէջ կը քրքրէ Բերայի Աղջկանց Արհեստանոցը լաւագոյն ուղղութեան մը մէջ դնելու խնդիրը, իրաւումը յայտարարելով որ սպասուածին չափ յաջող սկզբնաւորութիւն մը չունեցաւ այդ հաստատութիւնը, երբ վերաբացուեցաւ այս անգամ, եւ թէ «սակաւաթիւ աշակերտուհիներ միայն կը հետեւին հիւսիս նոյն Արհեստանոցի դասերուն, ու ատենք ալ՝ պահանջուած հսկողութենէն զուրկ բան մը ըլլալ չեն խոստանար»:

Արուեստից Եփաղրամ շնորհուեցաւ Տոբթ. Ազգ. քսանդր պէյ Արապեանի:

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Կ. Ա. Պ. (Սերասիա) — Փոխանակագրինդ վճարուեցաւ այսօրդ, հասկցուելով որ փոխանցումի գործողութեան զկատարուելը պարզապէս մոռացումի մը արդիւնք էր: Անցուցինք ի հաշի Մասիս բաժանորդագրութեանց: Նոր բաժանորդին բերքերը սկսան ղրկուիլ՝ Մայիս 1ի քիւն:


Գ. Յ. Ս. (Պէրկամա) — Ստացանք 50 դրշի օսմ. նամակադրոշմ, ի հաշի Ձեր տարեկան բաժանորդագրութեան: Թիւ 10 Մասիսը կը ստանաք այս օրուան բոլորատարով:

ՀԱՐՄԱԿ (Արմաօ) — Պիտի հրատարակուի:

Յ. Յ. (Գարբերդ) — Պակաս քիւերը ղրկուեցան:

Խ. Թ. (Թոմար) — Գանձեցինք: Նոր բաժանորդին բերքերը ղրկուած են արդէն:

ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՄԲԱՐՉՄԱՆ ՏՕՆԷՆ



Ժամերգութիւն եւ պատարագ՝ մատրան մէջ, հոգեհանգիստ՝ բարեբարներու գերեզմանին վրայ, անդաստան եւ օրհնութիւն՝ Հիւանդանոցի բոլոր պատասպարեալներուն, սեղան ու բաժակաճառեր, յետոյ Որբանոցի հանդէսը: Սպառուած, իր բոլոր մասնիկներուն մէջ նկարուած նկարագրուած նիւթի մը առջեւ կը գանուիմ, ու յիշելով Մասիսի նախորդ շաբթուան խոստումը՝ տպաւորութեանց շարք մը տալու իր ընթերցողներուն, օտաւում մը կընեն, կը հեռանամ աւանդական յայտագրէն՝ հոս հոն թափառելու եւ թափառեցնելու համար գրիչս:

կան երեւոյթը ընծայելով, որ կը զեղու ու կը պոթիկայ լայն էջերու մէջ իսկ, աւելի՛ն փընտուելով: Իր սիրական անկիւնը ունենալով միշտ Մասիսի մէջ, Պոլսոյ հայ լրագրութեան մեծագոյն մասին մէջն է Եղիան այս միջոցիս: Ինչպէ՞ս կը հասնի ամէնուն, առանց երբեք տկարանալու, առանց բառ մը, պարբերութիւն մը պակաս գրելու, միշտ վճիտ պահելով իր ոճը, սակեղենիկ՝ իր աշխարհաբարը, եւ ճոխ՝ իր իմաստները, պէսպիսութեամբ լեցուն ուսումնասիրութիւններու մէջ:

Առաջին այցելութիւնս, Հիւանդանոցին մէջ, Եղիա՝ Տէ միրճիպաշեանին եղաւ, եւ ինչո՞ւ իրեն չի նուիրեմ առաջին տողերս: Անձնական բարեկամութենէս ու իր միշտ առողջ տողանդին վրայ ունեցած հիացումէս զատ, խնդակցութեան ու շնորհակալութեան պարագ մը ունէի Գրասէր Ատոմին, որ երկու տարուան ըտեթիւնը առաջին անգամ Մասիսի միջոցաւ խոսելու պատիւն ըրաւ, անկէ յետոյ տարածելու, ծաւալելու համար իր բեղուն մտքին արտադրութիւնները միւս թերթերուն մէջ, պարբերականներէն անցնելով օրաթերթերուն, գրական մակընթացութեան մը եզա-

վերջին անգամ իրեն հանդիպած էի 1900ի ձմեռը, անձրեւոտ գիշեր մը, Բերայի շիտակ ճամբան, մայթին վրայ՝ ուրիշ կանցնէր կերթար ստուերի մը պէս, հեքստ կուրծքով, զողոզ քայլերով, կրկնոցին օձիքները դարձուցած՝ ցուրտէն պատասպարուելու համար: Հազիւ քսանի մը բառ փոխանակած էինք: Այն գիշերուան իր հիւանդկախ երեւոյթը մըտքիս մէջ դրոշմուած էր, եւ կը վախնայի որ պիտի տեսնեմ զինքը աւելի՛ տկար ու նիհար, գուցէ ընկալմանած անկողնին վրայ, երբ ապրիլ 10ի հինգշաբթի օրը, իր խուցին դուռը զարկի Հիւանդանոցի վերնագաւթակին վրայ: — Մտէ՛ք:

Ու կը մտնենք Արամ Անտոնեանին, իր հիւանդ դրացիին հետ, — երկուքը մէկանց՝

«Ազգին Տուն» և Գրականութեան Տուն մը դարձնելու բառով ։ Պարզապէս չեմ հաւատար աչքերուս , առողջ եղիւս մը կը տեսնեմ դէմս , ստքի վրայ , ձեռքերը խաչածեւ՝ իր նստասիրած կեցուածքովը , գլուխը միշտ բարձր բռնած , աչքերը թարթափելով ու մեղամաղձոտ ժպիտ մը դէմքին վրայ ։ Միակ փոփոխութիւնը , իր կերպարանքին վրայ , ձերմակ թեւերուն ծաւալումն է գլուխէն դէպի մօրուքը , երկուքը մէկանց ալեւորիլ սկսած լըջօրէն ։

Շատ անհատական գոյն մը տուած պիտի ըլլայի սպաւորութեանն նոթերուն , արձանագրելով հոս մեր խօսակցութիւնը որ իր առողջութեան , լրագրութեան ու գրականութեան վրայ դարձաւ ։ Ո՛չ գիրք , ո՛չ լրագիր , ո՛չ իսկ թուղթի կտոր մը կը նշմարէի իր սեղանին վրայ , որ սովորական հիւանդի մը սեղանի էր , պարզ ու մաքուր . եւ սակայն իր բազմակողմանի յօդուածները կարգացողները պիտի կարծէին որ ահագին մատենադարանէ մը շրջապատուած կը գրէ զանոնք , գրասեղանի մը առջեւ ուր թուղթի դէզեր կը սպառուին օրն ի րուն ։ Ձի հարցոցի գաղտնիքը , զիտնալով որ մատենադարանը իր մտքին մէջն է , ու եկեղծներով որ այն հոյակապ գըրուածքները կարուագրէ , մէկ ձեռքով , շատ անգամ կապար գրելով , պատուհանին քովիկր , աթոռակի մը վրայ նստած , օրուան հաշիւ մը արձանագրողի մը անսարքերութեամբ ։

Ժամ մը ետքը , գրող եղիւին յաջորդեց խօսող եղիւան , սեղանատան մէջ , հարիւրէ աւելի սեղանակիցներու մէջտեղ , եկեղեցական դասին հանդէպ որուն խօսելու փորձերը չի հաւասարեցան իրենին ։ Լեցուն բաժակը զոր բռներ էր աջ ձեռքին մէջ , կը դողդղար՝ առանց սակայն կաթիլ մը գինի դուրս թափուելու , եւ չթնոնքներն ալ կը դողդղային յսգլուռքէն , առանց սակայն աւելորդ բառ մը դուրս ելլելու ։ Ծափերու մէջ եկաւ նստիլ իր տեղը , երբ սքիչը աւարտեց , լուս ու սքօղուած , եւ սեղանէն ետքը՝ վերագարձաւ իր հիւանդի խօսքը , աւելի՛ տրտուով , աւելի՛ գլխիկոր , տեսնելով իր բարեկամներուն , իր գրչի ընկերներուն ու աշակերտներուն զուարթ ու թեթեւօտան հեռացումը Հիւանդանոցէն , որ իրիկնամուտի առաջին ժամուն՝ թաղուեցաւ նորէն իր խոր ամայութեանը մէջ ։

Հիւրանոցին մէջ , ուր ներկաներուն «հրաւիրեալ» մասը հաւաքուեցաւ առտուան արարողութիւններէն ետքը , սեղանի երթալու համար , բարետոհմիկ օրիորդի մը ներկայութիւնը նշմարեցինք որ արժանաւոր յարգանքով ընդունուեցաւ ։ Օր . Մաթիլա Ֆէրուխան չընդունեց սակայն սեղանի հրաւէրը եւ նախամեծար սեպեց երթալ աղջկանց Որբանոցը այցելել , ընտանեզուրկ մանուկներուն հետ անցընելու համար . քանի մը ժամ , — մարդասիրական այցելութիւն մը որ իր սփոփարար տալաւորութիւնը թողուց ։ Հիւանդանոցի Տնօրէնութեան սենեակին մէջ կը գտնուէր նաեւ , ճաշի միջոցին , Տիկին Հեթում Սեթեան՝ իր ամուսնին հետ , որ Հիւանդանոցին համար աշխատող մը ու նպաստող մը եղած է միշտ ։ Իրենք ալ չուզեցին մասնակցիլ սեղանի , քանի որ ուրիշ կին չիկար ։

Կարելի չէ՞ որ այս պարագան թելագրութիւն մը ըլլայ , — քանի որ սովորութիւն է Համբարձման տօնին օրը սեղան տալ Հիւանդանոցին մէջ , այս կամ այն մարդասէրին ծախքով , ինչպէս այս անգամուան ծախքը հոգացած էր Հոգարարձութեան ատենապետ Պատրիկ էֆ . Կիւլպէնիեանի կրտսեր եղբայրը՝ Յարութիւն էֆ . , — որ ընտանիքներ ալ հրաւիրուին սեղանին , intime , ընտանեկան երեւոյթ մը տալու համար անոր , մասնակցելով նաեւ զանազան յարկերը կատարուած պտույտներուն օրոնց աւելի՛ միւրթարական հանգամանք մը պիտի տայ արիկիններու եւ օրիորդներու ներկայութիւնը ։ Օր . Ֆէրուխանի նախածեւանութիւնը հետեւեկի օրինակ մըն է , Խնամակալուհի Տիկիններէն սկսելով մինչեւ այն Տիկիններուն համար ուրանք Եէտի-Գուլէի կողմը ստք կոխած չեն եւ Հիւանդանոցը ընդնշմարած են միայն , դէպի Ֆլօրիա դարնանային պապոյտի մը առթիւ . կառավարման պատուհանէն ։

Թատրոնէ , Նուագահանդէսէ աւելի՛ մարդասիրական հաստատութիւններու մէջ չէ՞ որ որ կը փնտառուի , մանաւանդ տօնական օրեր , փափուկ սեսին ներկայութիւնը . որ բարի հրեշտակներու այցելութիւնը պիտի ըլլայ՝ եթէ միայն կամք ունենան անոնք ։

Տ . Ա .

Արսօնասէր Կ . Ս . Ի Ի Թ Ի Ի Ճ Ե Ա Ն

Տպագրութիւն Ե . Մ Ա Տ Թ Է Ո Ս Ս Ա Ն
Կ . Պոլիս , Ֆինանսերուր եօգուշու , Թիւ 27

Մասիս շաբաթաբերքի արեկան բաժանորդագրինն է Կ. Պոլսոյ համար ԲԱՌՍՈՒՆ ղրԵ. եւ գաւառներուն համար ՅԻՍՈՒՆ ղրԵ., կանխիկ վճարելի : Արասահման՝ 12 Ֆրանկ կամ 5 բուլլի : Թղթասարական ծախքը խմբագրութեան վրայ է : Վեցամսեայ կամ եւրամսեայ բաժանորդագրութիւն չընդունուի : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկէն :

Մասիս հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու , եւ կը գտնուի Բերայի բոլոր ծխաւանդակներուն ու Պահիչ Դարուի ջրավանդակներուն խանութները , ինչպէս նաեւ Ղալաթիոյ , Պոլսոյ եւ բոլոր արուարձաններու լրագրավանդակներուն հոյ :

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

Ի Ի Ն Ի Օ Ն

Հ Ր Դ Ե Հ Ի Ե Ի Կ Ե Ն Ա Յ

Ա Պ Ս Հ Ո Վ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Հ Ա Ս Տ Ա Տ Ե Ա Լ Ի Բ Ա Ր Ի Չ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ վնասք	240,000,000 Քր.
1899ին զանձուած ապահովագրին	19,500,000 »
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000 »

Կ Ե Ն Ա Յ Ճ Ի Ի Ղ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ վնասք	99,000,000 Քր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000 »
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Ինիօն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵՂԻ ՁԷ ԳՏՆԵՆԼ ԱՐԵԻՆԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵԻ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ :

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց զեղչեալ գիներով : Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները : Շահարաժիններու տարուէ տարի անմիջական վճարում , որով Ինիօնի ապահովագրուողք ՁԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն , որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք , որ շահարաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին :

Ընկերութեան դրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս , Կալաթա , Թահսապուրուն խան , Օսմ. Պանֆային դիւանքը

Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

ԸՆՏԻՐ, ՀՈՏԱԻԷՏ, ԽՆԱՅՈՂԱԿԱՆ

ԹԷՅ

ԹԷՅ

ԹԷՅ



ԹԷՅ

ԹԷՅ

ԹԷՅ

Ամէն տեսակ թէյերու նոր բերքերէն մեծ քանակութեամբ հասած է ԵՍՎՐՈՒԵԱՆ ԻՍՍԳՈՒԼԵԱՆ վաճառատունը : Թէյի սիրահարներն ու ամէնէն փափկաճաշակներն իսկ վերջին ծայր գոհ պիտի մնան այս թարմ թէյերէն , որոնք ընտիր , առողջապահիկ եւ հոտաւէտ ըլլալով հանդերձ անմրցելի ըսուելու աստիճան աժան են :

Գաւառներու յաճախորդք թէյ գնելու համար պէտք չունին անձամբ գալու , նամա-

կով թող զիմեն ԵՍՎՐՈՒԵԱՆ ԻՍՍԳՈՒԼԵԱՆ վաճառատան , ուր ամենամեծ խնամով , զգուշաւորութեամբ կը գործադրուին ամէն կարգի յանձնարարութիւնք՝ մեծաքանակ եւ փոքրաքանակ : Դիւրութեան համար՝ թէյերուն փոխարէնը կարելի է վճարել նաեւ երբ ապրանքները բեռացուին ու խնամքով ներկայացուի գնողին : Կեզծ թէյ չգնելու համար հաճեցէք ուշադրութիւն ընել վերի մարքային եւ ԵՍՎՐՈՒԵԱՆ ԻՍՍԳՈՒԼԵԱՆ անուանք : Կեդրոնաւանդին՝ Կ. Պոլիս , Պահէ Գաբու , Ճէլալ Պէյ խանի կից , թիւ 10 , Կ. Եսվրուեան Յ. Իսազուլեան մեծ վաճառատունը :

THE GRESHAM

ԿՐԷՇԱՄ

ԱՆԳՂԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ՀԻՄՆՈՒԱԾ Ի ԼՈՆՏՈՆ

1848 ԻՆ

Դրամագլուխ եւ երաւխաւորութեան գումար աւելի քան 175,000,000 Ֆրանկ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԿԱՅՍՏՈՒՑԻՉՔ ԷՏՈՒԸՐՏՍ ԵՒ ՈՐԴԻ

Ալալըմնի խան , Կ. Պոլիս :

Հ Ա Ս Ս Ա Տ Ե Ա Լ 1852

ՏՔԹ. Ա. ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

ԱՄԵՐԻԿԵԱՆ – ԱՏԱՄՆԱԲՈՅԺԲ

396, ՄԵՄ ՓՈՂՈՑ ԲԵՐԱ, 396

(Եաննի գարեջրասան վրայի յարկը , ճիւղ Չըպուհեանց դեմը)

Կատարելագործեալ գործիքներու միջոցաւ ամենասատուիկ ցաւած ախուաները մեկ անգամեւ կը լեցնեն . ցաւով դիմելու եւ բուժուած վերադառնալու պայմանաւ :

Նորահար եղանակաւ , նորր , ճաշակաւոր եւ դիմացկուն արհեստական ախուաներ կը պատրաստեն , յար եւ նման բնականի , դեմքի ձեւաւորութիւն ըստ արիֆի , ծանոցութիւն եւ ազատ արտասանութիւն երաշխաւորուած :

Բերնի հիւանդութիւնք կատարելապէս կը բուժուին ինչպէս նաեւ թմրեցուցիչ գեղերու եւ ամենակատարելագործեալ աքցաններու միջոցաւ , առանց ցաւի առամնահամութիւն :

Յ. Գ. Ձմեռները կիրակի օրերն ալ (մինչեւ կես օր) ինչպէս նաեւ ամէն օր (մինչեւ կես գիշեր) հիւանդ կ'ընդունին :

Ծանօթ. — Պոլսոյ կողմը մասնաճիւղ ՉՈՒՆԻՆԳ.